№ 219 Դեկտեմբերի 19 (31) **1878** Դեկտեմբերի 19 (31) № 219

ԵՕԹՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 րուբլ, կէս տարվանը 6 րուբլ։

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Օտարքաղաքացիք դիմում են ուղղակի
Тифлисъ. Редакція „Мшакъ"

Խմբ. րատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերից)։

Յայտարարութիւնները ընդունվում են ամեն լեզուով

Յայտարարութիւնների համար վճարվում են իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

„ՄՇԱԿ"

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

1879 Թւին

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՎԻ ԱՄԵՆ ՕՐ, բացի տօն և տօներին հետեւեալ օրերից։

Լրագրի ղիրքը և պրօգրամման նոյն են մնում։ Մենք ստանում ենք ՍԵՓԱԿԱՆ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ։ «ՄՇԱԿԻ» տարեկան գինը 10 րուբլ է, կէս տարվանը 6 րուբլ։ Գրվել կարելի է ՄԻԱՅՆ ԽՄԲԱԳՐԱՏԱՆ մէջ։

ԱՌԱՆՁԻՆ ՀԱՄԱՐՆԵՐԸ ծախվում են 5 կոպէկով հատը։

Օտար քաղաքներից պէտք է դիմել հետեւեալ հասցէով՝ ТИФЛИСЪ Редакція «Мшакъ».

Խմբագիր—Հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Կրկին Թատրօնի մասին։—Ներքին տեսութիւն։ Նամակ խմբագրին։ Ներքին լուրեր։—Արտաքին տեսութիւն։ Ֆրանսիա։ Անգլիա։—«Մշակի» հեռագիրներ։—Յայտարարութիւններ։—Ֆելիետօն։

ԿՐԿԻՆ ԹԱՏՐՕՆԻ ՄԱՍԻՆ

Այն ընկերութիւնը որի մասին մենք խօսեցինք մեր անցեալ համարներում, և որի նպատակը պէտք է լինի հիմնել հաստատ հիմքերի վրա հայոց թատրօնի գործը Թիֆլիսում, մեր կարծիքով կարող է կազմակերպվել երկու տեսակ։

Կարելի է ստորագրութեամբ մի յայտնի գումար հաւաքել, անդադար մեծացնելով այդ գումարը յօգուտ թատրօնական փօնդի տրվող ներկայացումներով, կօնցերտներով և այլ խնջոյքներով, կազմակերպել ամբողջ թատրօնական գործը այդ գումարով և տարիների ընթացքում յետ դարձնել ստացվող արդիւնքից նուիրատուներին իրանց ստորագրած գումարը, տոկոսով, կամ առանց տոկոսի։ Այսու ամենայնիւ առաջին տարիներ դժուար թէ փողերը կարելի կը լինի նուիրատուներին յետ դարձնել։

Երկրորդ ձեւը թատրօնական ընկերութեան товарищество на вѣрѣ անուանված ընկերակցութիւն կարող է լինել։ Այդ տեսակ ընկերութեան մասնակցողները կարող են եթէ ոչ առաջին տարիները, գոնէ ժամանակով դ ի վ ի դ է ն դ ստանալ իրանց տուած գումարից։

Գուցէ առաջին տարիները ծախսերը մեծ կը լինեն և արդիւնք չի լինի։ Բայց թատրօնը այնպիսի մի գործ է, որ ժամանակով, երբ նա կը դառնայ անհրաժեշտ կենսական պահանջ հասարակութեան համար, կարող է մեծ արդիւնքներ տալ ընկերութեանը։

Չը պէտք է մոռանալ որ շատ բաներում, ինչպէս օրինակ դեկօրացիաները և գուցէ ժամանակով և օրկէստրը, հայոց և վրաց թատրօնական խմբերը կարող են ընդհանուր կասսա ունենալ։

Վերջապէս այդ բոլորը ցոյց կը տայ ժամանակը և փորձը։

Պէտք է սկզբից աշխատել, ինչպէս որ լինի, որքան կարելի է շատ փող հաւաքել և մի թատրօնական ընկերութիւն, կամ մասնաժողով կազմել. մնացածը ժամանակը ցոյց կը տայ։

Իսկ եթէ հայերը, մեր Թիֆլիսի հարուստ և ազգասէր հայերը անընդունակ յայտնվեցան ազգային թատրօնի համար որ և է բան անել, չը կարողացան զարթնել իրանց խոր քնից, դուրս գալ իրանց սպանող անտարբերութենից,—թո՛ղ չը նեղանան եթէ մի մասնաւոր անձն հանդէս դուրս գայ և կրկին մենակ այն անի, ինչ որ ամբողջ հասարակութիւնը անընդունակ եղաւ անելու։

Գ. Ա.

ՖԵԼԻԵՏՕՆ

Նինա Անդրիեւսկու գործը։—Ռօմանը դատարանում և ռօմանը դատարանի դահլիճում։—Օրիօրդներ և երիտասարդներ։—կանայք էկսպէրտներ, կանայք դատաւորներ և կանայք ադվօկատներ։—Պրօկուրօրը և պաշտպանը։—Դատաստանական նոր պրակտիկա։—Հին յունական պատմութենից մի օրինակ։—Ասիացու նամակագիրները։—Ախալցխայի երիտասարդութիւնը և Թիֆլիսի Հայաստանցի։—Իմ պատասխանը և իմ խորհուրդները։—Կրթված և անկիրթ հայը, կրթված և անկիրթ հայուհին։—Տգիտութիւն որպէս գոյութեան պայման։—Թիֆլիսցի կրթված հայ մայրը։—Օտար և մայրենի լեզու։—Բերինովի և Ռօտինովի մագազինի հովհարը։—Իմ խորհրդածութիւնները այդ հովհարի մասին։—Գիմնազիստուհի, հարսնացու աղջիկ, երաժշտուհի, սիրեկաններ ունեցած կին և ընտանիքի մայր։—Հովհարի վիճակը։—Կրկին Անդրիեւսկու գործի մասին։—Մեր բժիշկները և պ. Սօրօկին։—Լուսաւորված բժիշկներ և ժողովրդական բժիշկներ ու պառաւ բժիշկ կանայք։—Ի՞նչ կասէր Մօլիէր։—Մեր քաղաքային ընտրութիւնները։—Մեր ընտրողների հասարակական անզարգացումը։—Անձնական հաշիւներ և հասարակական շահեր։—Վրաց «Դրօէբայի» կողմից արած հարցմունքը։—Իմ պատասխանը վրաց լրագրին։

—

Այս մի քանի օր է ինչ ուզում էք տեղական լրագիր բաց արէք, ինչ ուզում էք խօսակցութիւն լսէք,—ամեն տեղ կը կարդաք, կամ կը լսէք օրիօրդ Ն ի ն ա Ա ն դ ր ի ե վ ս կ ո ւ անունը։ Ամենքը զբաղված են խեղճ օրիօրդի սպանման գործով։

Ես էլ, ուրիշների պէս, ամբողջ հինգ օր դատարանում անցկացրի։ Մինչև որ մի դեռ չը բացված ռօմանի ընթացքը քննվում էր դատաւորներից, մտածում էի ես, ինչքան ուրիշ ռօմաններ պատրաստվում էին դատարանի դահլիճում։ Միմեանց սեղմած, հինգ օր շարունակ, աղջիկներ և տղաներ, ինչպէս մի նաւի վրա միասին ժամանակ են անցնում, ենթարկվելով մի և նոյն տպաւորութիւններին, մի և նոյն զգացմունքներին, մի և նոյն վտանգին իրանց տունը ճաշին չը հասնել և քաղցած մնալ.... Մի օրիօրդ քաղցած է, յայտնում է այդ մասին բարձր ձայնով իր ընկերուհուն. մի անծանօթ երիտասարդ լսում է այդ, իսկոյն առաջին ընդմիջումից օգուտ է քաղում, վազում է մօտակայ քաղցրեղէնների խանութը և բերում է զանազան քաղցրեղէններ և հրուշակներ.... Ահա կապվում է ծանօթութիւնը։ Սովորաբար հպարտ օրիօրդը մոռանում է իր հպարտութիւնը, երբ անօթի է.... Նա ընդունում է. ծանօթութիւնը կապվում է.... գուցէ դա ռօմանի սկիզբն է....

Մի այլ օրիօրդ, թէեւ վաղուց ծանօթ էր արդէն մի երիտասարդի հետ, բայց միմեանց մէջ խօսելով երբէք խօսակցութեան բաւական հետաքրքիր նիւթ չէին գտնում։ Ահա ձեզ առատ նիւթ.... Անդրիեւսկու գործի վրա խօսելով երիտասարդը կարող է յայտնվել, արտայայտել իր զգացմունքները, ցոյց տալ իր խելքի ամբողջ պաշարը.... Նա կարող է ընտրել՝ երկու թեմաներն էլ շնորհակալ են. կամ նա կարող է պաշտպանել Անդրիեվսկուն և յարձակվել Ջխօտուային դէմ, կամ ապացուցանել որ Ջխօտուա և Գաբիսօնիա անմեղ են, ազնիւ են, բնութեան որդիք են.... և այլն....

Ու ինչքան հետաքրքիր հարցեր էլ կան նոյն ինկ գործի մէջ։ Օրինակ, օրիօրդները լողանում են լուացքով թէ առանց լուացքի.... և այլն։

—Շատ հարցերում, ասում էր ինձ իմ ծանօթ մի ռուս տիկին, ինձ հետ կօրիդօրում մնալով, մենք կարող էինք աւելի ճիշտ տեղեկութիւններ տալ դատաւորներին, աւելի պարզել հարցը քան թէ տղամարդիկ. օրինակ կանանց զանազան սովորութիւնների մասին։ Եթէ մեզ չեն թողլ տալիս դատաւորներ, պաշտպան կամ պրօկուրօր լինել, գոնէ հրաւիրէին մեզ որպէս է կ ս պ է ր տ ն ե ր....

—Այդ բանի մէջ ես ձեզ հետ բոլորովին համաձայն եմ, պատասխանեցի ես, կանայք նոյնքան օգտաւէտ էկսպէրտներ կարող էին լինել որքան բժիշկներ, կամ այլ մասնագէտներ, բայց եթէ դատաւորներ, պրօկուրօրներ, կամ պաշտպաններ լինէին,—գուցէ զանազան զեղծումներ կը պատահէին։ Մանաւանդ անյարմար կը լինէր եթէ դատաւորներից ոմանք կանայք լինէին միւսները տղամարդիկ. պրօկուրօրը, օրինակ, տղամարդ լինէր, իսկ պաշտպանը կին, կամ աղջիկ։

Գործի քննութեան նախընթաց օրը երիտասարդ պրօկուրօրը օրիօրդի հետ մի պարահանդիսում խօսելով, յայտնում էր նրան ճարտար խօսքերով իր սէրը, առաջարկութիւն էր անում նրան։ Բայց օրիօրդը անողոքելի էր.... Նա պարզապէս մերժեց երիտասարդին իր սէրը.... Միւս օրը երիտասարդը մեղադրում է, իսկ օրիօրդը պաշտպան է մեղադրվածների։ Երիտասարդը շփոթվում է, նրա սիրտը սկսում է սաստիկ բաբախել.... Նա մեղադրում է.... յանկարծ նրանց աչքերը միմեանց պատահել են.... Նա տեսնում է աղջկայ իր վրա ուղղված հայեացքի մէջ մի խոստմունք, որ այն ինչ որ երէկ մերժվեցաւ, կարող է տրվել.... Նա տեսնում է իր առջև մի ամբողջ ապագայ, մի անասելի երջանկութիւն.... Եւ յանկարծ անսիրտ մեղադրողից, նա ինքն դառնում է պաշտպան, նա բոլորովին փոխում է իր դատողութեան եղանակը։ Նրա մեղադրանքը կորցնում է իր ույժը.... Մեղադրվածը արդարացրած է....

Ի հարկէ այն ժամանակ դատաւորները ու նախագահն էլ պէտք է հոգեբանապէս աւելի զարգացած մարդիկ լինէին, դատաստանական պրակտիկայի մէջն էլ կը մտնէին այժմ չը գործածվող սովորութիւններ.... Օրինակի համար նախագահը տեսնելով որ պաշտպանը ուղղում է պրօկուրօրի վրա մի չափից դուրս քաղցր հայեացք, ստիպված կը լինէր ասել՝—ես պարտաւորութիւն եմ համարում խնդրել պաշտպանին չը նայել պրօկուրօրի վրա, այլ խօսելու ժամանակ նայել կամ ինձ վրա, կամ այս պատուհանի վրա։

Հին յունական պատմութենից գիտենք որ Աթէնքի ծերակոյտը արդարացրել է մի կնոջ, որովհետեւ նա սաստիկ գեղեցիկ է եղել....

⁂

Վերջին ժամանակները ամեն կողմից սկսեցին ինձ նամակներ գրել. ինչպէս երևում է Ասիացին իր համար առանձին խմբագրութիւն է կազմում։ Մանաւանդ հետաքրքիր է Ախալցխայի երիտասարդ վաճառականներից և արուեստաւորներից ստորագրված նամակը և Թիֆլիսից գրած մի Հ ա յ ա ս տ ա ն ց ի ստորագրութեամբ նամակը։ Երիտասարդները դիմում են ինձ ասելով «Դուք սովորեցնում էք մեր օրիօրդներին ինչպէս նրանք պէտք է որսան փեսացուներին, բայց մեզ երիտասարդներիս ոչինչ խորհուրդ չէք տալիս, ինչպէս մենք պէտք է վարվենք օրիօրդների հետ, որ նրանց գրաւենք։ Մեր կրթված օրիօրդները չեն ուզում ամուսնանալ մեզ հետ, հայ երիտասարդ արուեստաւորների, վաճառականների և գիւղական կալուածատէրերի հետ. նրանք մեզ արհամարհում են. նրանց իդէալն է՝ պաշտօնեաները և զինուորականները։ Ի՞նչ անենք որ նրանց համակրութիւնը ստանանք։»

Այս տեսակ նամակներին ինչ կարող եմ պատասխանել։

Չէ կարելի չը համակրել կանանց կրթութեան գործին, բայց երբ կինը մի հասարակութեան մէջ նոյնքան կրթութիւն է ստանում, ինչքան տղամարդը, նա աւելի դիւրըմբռնելի բնաւորու-

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Դերբենդ, 5 դեկտեմբերի

Բագուի հասարակութիւնը պ. Դաւիթ Իւզբաշեանի միջնորդութեամբ ուղարկել է ինձ վրա 91 ռուբլի, որ հաւաքել են Դերբենդի պակասաւոր ընտանեաց կարիքը թեթեւացնելու նպատակով։

Ցիշեալ գումարը գործադրած է կարօտեալների հանգամանքին նայած այսպէս. եօթը չքաւոր ընտանեաց բաժանած է 61 ր., իսկ մընացեալ 30 ր. գնած են հայոց լեզուի դասագրքեր չունեցող ուսանող աշակերտաց համար։

Օգնութիւն ընդունող ընտանեաց և աշակերտաց, ընդ նոսին և իմ խորին շնորհակալութիւնը յայտնում եմ Բագուի մարդասէր հասարակութեան։

Արսէն քահանայ Տէր Ղազարեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ՀԱՄԶԱՋԻՄԱՆ գիւղից մեզ գրում են. «Օրերումս մեր գիւղում Յովսէփ աւագ քահանայ Կոստանեանցը նուիրատուութիւն հաւաքեց յօգուտ Հաւրէմի վանքի ընկերութեան։ Տէր հայրը 65 ռուբլի հաւաքեց։ Մի քանի անձինք պարտաւորվեցան տարեկան 25 ռուբլի վճարել։ Շրջակայ գիւղերում նոյն նպատակի համար նուիրատուութիւններ են հաւաքվում։»

—

Մեզ գրում են ԲԱԳՈՒԻՑ. «Նոյեմբերում մեր քաղաքային Դուման, մի քանի ձայնաւորների պահանջմամբ, արտակարգ նիստ ունեցաւ. ձայնաւորների մեծագոյն մասը ներկայ էր։ Առաջարկվեցաւ հասարակութեան երախտագիտութեան զգացմունքը որ և իցէ կերպով յայտնել նոցին գերազանցութեանց Բագուի նախկին նահանգապետ Ստարոսելսկուն (այժմ Փոխարքայի գլխաւոր կառավարութեան մեծաւոր) և Կովկասի լեռնային մասի կառավարիչ Ի. Ա. Շտէյնմանին, որոնք մեծամեծ լաւութիւններ են արել Բագուին։ Բոլոր ձայնաւորների և վարչութեան անդամների կողմից սիրով ընդունվեցաւ այս առաջարկութիւնը. վճռեցին քաղաքի գումարից նշանակել տարեկան 900—1000 ռուբլի, որով մշտապէս երեք չքաւոր որդեգիրներ ուսանեն բարձրագոյն դպրոցներում երկուսը Ստարոսելսկու, իսկ մէկը Շտէյնմանի անունով։

—

Երեք օր է ԹԻՖԼԻՍՈՒՄ սկսեց անձրևախառնը ձիւն գալ։ Փողոցները ցեխով ծածկված են։

—

«Մեր քաղաքում միայն մի հատ հիմնարկութիւն կայ, դրում է Բագուի մեր թղթակիցը, ուր առաջաւոր դասը ժամանակ է անցկացնում. այս «Ազնուականաց ժողովարան» անուանվածն է, որը առաւելապէս աստիճանաւորների համար լինելով վաճառականների մեծ մասին, մանաւանդ միջակներին, անմատչելի է և անօգուտ։ Աստիճանաւորների և վաճառականների դասերը միմեանց հետ չունեն, այս յայտնի է արդէն։ Անցեալ տարիներից սկսած ոմանք միտք են ունեցել «Վաճառականների ժողովարան» հիմնել, բայց չեն կարողացել արգելքների հանդիպելով։ Նորերս «Ազն. ժողովարանում» հերձուած ծագեցաւ. մի հայ վաճառական ցանկանում էր անդամ դրվել, բայց քուէարկեցին և մերժեցին (գուցէ և իրաւացի պատճառ են ունեցել)։ Վաճառականներն այս դէպքից վշտացած և թեւադրված որոշել են անպատճառ առանձին ժողովարան հիմնել. ստորագրութիւն են բացել և ասում են, մօտ 20,000 ռուբլի գրվել են արդէն. կանոնադրութիւնն ևս պատրաստում են, որ առաջարկեն, ուր հարկն է, հաստատութեան համար։— Նորակազմ ժողովարանը եթէ հանրաշահ հիմքերի վրա է հաստատվելու, եթէ իր համեստութեամբ և էժանութեամբ մատչելի է լինելու միջակներին և գործակատարներին ևս, եթէ մի տեսակ վաճառանոց է հանդիսանալու անխտիր ամենքի համար, ապա բոլոր սրտով ցանկանում ենք նրա յաջող և շուտափոյթ իրագործվելուն. իսկ մենակ հարուստների համար է եթէ միայն, ուտել—խմելու, թղթախաղի, շռայլութեան և ինքնացուցութեան ասպարէզ է լինելու, ապա ինչ կուզէ թող դառնայ, թէկուզ իսկի յաւիտեան գլուխ չը գայ»

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՖՐԱՆՍԻԱ

«Temps» լրագրում կարդում ենք հետեւեալը.

«Ներկայ երեք մշտական սենատորների ընտրութիւնը, որ պէտք է կայանայ Սենատում, առաջին ընտրութիւնների նման շատ հետաքրքիր չէ։ Այդ սենատորները եթէ մինչև անգամ պատկանէին աջակողմեան կուսակցութեանը, այնու ամենայնիւ դրանով ոչ հանրապետութիւնը կը կորցնի իր ազդեցութիւնը և ոչ էլ ժողովուրդը կը կորցնի իր ջերմվեռահութիւնը դէպի հանրապետութիւնը։ Ինչքան էլ որ աջակողմեանները երեք հոգով առաւելութիւն ձեռք բերեն, այնու ամենայնիւ դրանց այդ առաւելութեան ոյժը միայն մի քանի շաբաթների համար պէտք կը գայ և դրանք խելօք կը վարվեն եթէ աշխատեն դրանից օգուտ քաղել, որովհետև շուտով կը գան յունվարի 5-ի ընտրութիւնները, և դրանք հանրապետութեան դէմ մրցելու ոյժից կընկնեն։

«Այս երեք մշտական կանդիդատների ընտրութիւնը արդէն աջակողմեանների կողմը պէտք է համարել որովհետև այդ մարդոց դաղափարները արդէն պարզ ցոյց են տալիս թէ նրանք որ կուսակցութեանն են պատկանում։ Հիմա տեսնենք թէ ինչ է արել աջակողմեան կուսակցութեան մեծամասնութիւնը. նա միշտ աշխատել է ապացուցանել որ իր քաղաքականութիւնը այն է ինչ որ եղել է միշտ, որ դրա քաղաքականութիւնը մշտական կռիւ է եղել, որ դա շարունակ հակառակել է ազգային ձգտումներին և այն կազմակերպութեանը, որ Ֆրանսիան ձեռք է բերել, և կամենում է հաստատ պահել։ Վերոյիշեալ երեք կանդիդատները ընդունելութիւն գտան աջակողմեանների զանազան խմբերից. պ. Նիւմա Բարանիսն ընդունվեցաւ օրինականներից, պ. Օսկար Վալլէն— բոնապարտիստներից. այս երեքից ոչ մէկը չեն ընդունում հանրապետական սկզբունքը։ Բոլոր երեքն էլ եռանդուն միապետականներ են. միայն դրանք համաձայն չեն թէ ով պէտք է գահին տիրէ։ Իսկ մի ուրիշ բանում դրանք շատ համաձայն են, այն է որ հանրապետական զօրքերի փոխանակ միապետական զօրքեր լինեն։ Անցեալ ուրբաթ օրվայ ընտրութիւնը աջակողմեանների կողմից մի յայտնի մրցումն էր հանրապետութեան դէմ։ Նրանք ընտրել էին ամենանշանաւոր անուններ, որոնց մէջ աւելի պարզ կերպով է երևում հանրապետութեան դէմ ունեցած հակառակութիւնը, և որոնք միանգամայն միապետութեան վերականգման ապագայ յոյսն են։ Այս կանդիդատների ընտրութեամբ աջակողմեանները կամեցան ոչ միայն միապետութեան սկզբունքները հաստատել, այլ նրանք կամեցան նոյնպէս հաստատել, ապատքաղաքականութեան հակառակ, ճնշող և զզուելի հրամայողական քաղաքականութիւնը, ուրշ խօսքով նրանք կամեցան իրագործել Բրոլլիի և Ֆուրտուի դիտաւորութիւնները։

«Բարանիսն անունը միայն բաւական է որ մարդս կատարեալ գաղափար կազմէ այն վերջին սենատորական ընտրութեան մասին, Բարանիսն, որ հակապարլամենտական է, որ հակազգային է, որ հակաազատամտական է, և որ երկու անգամ ներկայացաւ Ֆրանսիայի ընտրութիւններին, և երկու անգամ էլ ժողովրդական կարծիքը դրան պատժեց։

«Մեզ շատ ախորժելի է որ աջակողմեանները, Բարանիսին ընտրելով, ներկայացրին արդէն ժողովրդին իրանց պրոգրամման յունվարի 5-ի ընտրութիւնների մասին և մեր միակ ցանկութիւն այն կը լինէր, որ դրանք, զանազան դիմակներ հագնելով չը մոլորեցնէին խեղճ ժողովրդին։

«Ներկայ անհեռատես ընտրութիւնների մասին, աւելացնում է «Temps» լրագիրը, մենք աւելի առիթ ունենք ուրախանալու քան թէ տխրելու։

«Անցեալ օր բիւդժէտի մանաժողովը մի երկարաւէ նիստ ունեցաւ. ժողովը նախ և առաջ զբաղվեց Ներքին գործերի մինիստրութեամբ։ Պ. Կոնստան կարդաց իր յայտարարութիւնը։ Ժողովը, բոլոր կէտերում, համաձայնեցաւ մինիստրի հետ։ Պ. Կոնստանի յայտարարութիւնը ընդունվեցաւ, և եկող շաբաթ նրան արդէն կարելի է պատգամաւորների ժողովին ներկայացնել։

«Սրանից յետոյ ժողովը անցաւ ծովային բիւդժէտի գլխաւոր հարցերին, և դրանց իւրաքանչիւրի մասին նա տուեց իր եզրակացութիւն ունենալով, աւելի արագ զարգանալով քան թէ տղամարդը, աւելի էլ շուտ իրացնում է իրան կրթութիւնը, քան թէ տղամարդը։ Բայց կինը, ինչքան էլ կրթված լինի, պահանջ ունի միշտ ենթարկվել տղամարդու ազդեցութեանը։ Իսկ եթէ տղամարդը ինքն հանկամտաբար այնքան բարձր կրթութիւն չունի, կնոջ,—կամ աղջկայ կրթութիւնը սխալ և վտանգաւոր ընթացք կը ստանայ....

Մեր ազգը դեռ շատ անկիրթ է և դուցէ մենք մի աններելի սխալ գործեցինք, որ այդ չը հասկացանք և սկսեցինք միաժամանակ թէ տղաների և թէ աղջիկների համար դպրոցներ հիմնել։

Եւ ահա կինը հէնց որ կրթվում է, սկսում է արհամարհանքով նայել տղամարդու վրա, այն ինչ մարդը այն ժամանակ կատարելապէս բաղդաւոր է, երբ կինը նրա զարգացումից ստոր զարգացում ունի, երբ նա նայում է մարդու վրա, ինչպէս մի հեղինակութեան վրա....

Եւ որպէս բուն ասիացի խորհուրդ կը տայի մեր դաւառացի երիտասարդ վաճառականներին, կալուածատէրերին և արուեստաւորներին, որ նրանք շատ չը յուսահատվեն, որ կրթված հաօրիորդներ նրանց հետ պսակվել չեն ուզում, այ աշխատեն պսակվել գիւղացի, անկիրթ, նահապետական հայ աղջկերանց հետ։ Ճշմարիտ նրանք աւելի լաւ ամուսիններ կը լինեն, քան թէ մեր կրթված հայ օրիորդները։ Մեր գիւղացի հայ աղջկերանց մէջ աւելի բնական խելք կայ, բայց որ գլխաւորն է, աւելի կանացիութիւն կայ, քան թէ մեր կրթված հայ կանանց մէջ։

* * *

Ճշմարիտ զարմանալի ազգ է հայոց ազգը։ Ինչքան հայը կրթվում է, լուսաւորվում է, այնքան նա հեռանում է ազգային գաղափարից, այնքան նա անտարբեր է դառնում դէպի ազգութիւնը, դէպի իր մայրենի լեզուն։ Համեմատեցէք մի տգէտ ռամիկ հային մի բարձր ուսում ստացած հայի հետ, համեմատեցէք մի գիւղացի կամ արուեստաւոր հայ աղջկան մի գիմնազիական կամ ինստիտուտական ուսում ստացած հայ կնոջ հետ։ Դուք կը համոզվէք, այո, որ ռամիկ հայ մարդը, կամ ռամիկ հայ աղջիկը աւելի հայ են, քան թէ ուսում ստացած հայը և հայուհին։

Միթէ այդ ազգի գոյութեան անհրաժեշտ պայմանը տգիտութիւնն է։

Հէնց որ հայը տգէտ չէ (կամ երևակայում է իրան որ տգէտ չէ, այլ կրթված, լուսաւորված մարդ է կարծում իրան), նա էլ հայ չէ...

Դուք նատած եք մի Թիֆլիսեցի հայ տիկնոջ մօտ։ Տիկինը բաղմաթիւ ընտանիքի մայր է։ Նա ստացել է իր ուսումը կամ իդական գիմնազիայում, կամ ինստիտուտում։

Ձեր չորս կողմը դուք չ՝ հարկէ լսում եք միմիայն օտար լեզու։ Կէս օր է։ Այդ ժամանակ երեխաները վերադառնում են տուն ուսումնարանից,—աղջիկը իդական գիմնազիայից, տղան կամ գիմնազիայից, կամ ռէալական դպրոցից, կամ Տէր-Զակարեանի ուսումնարանից։

—Ինչպէս վերջացրիր քննութիւններդ, հարցնում է երիտասարդ մայրը իր որդուց։

—Ничего, Мамаша, хорошо.

—Թւաբանութիւնից ինչպէս պատասխանեցիր։

—Վարժապետներս շատ գոհ մնացին, պատասխանում է պատանին։

—Ռուսաց լեզուից ինչ թւանշան ստացար։

—Հինգ, մամաշա։

—Շատ լաւ, իսկ հայոց լեզուից ինչքան։

—Հայոց լեզուից չեմ յիշում, անտարբեր պատասխանում է որդին, կարծեմ երկու կամ երեք։

—Բան չը կայ, արհամարհանքով պատասխանում է հայ կրթված կինը, դու աշխատիր միայն ուրիշ առարկաներդ լաւ սովորել, իսկ հայերէնը միշտ ժամանակ կունենաս ուսումնասիրել, եթէ կուզենաս։

Ահա ինչ արհամարհանքով վերաբերվում է կրթված հայ մայրը դէպի իր մայրենի լեզուն։ Ահա ինչ օրինակներ է սովորում մեր երիտասարդ սերունդը իր ընտանեկան կեանքի մէջ...

* * *

Կանանց վրա խօսելով յիշեցի որ նորերումս անցնելով Դվորցովայա փողոցի վրա գտնվող Արծրունու գալլէրէի մայթով ակամայ կանգնեցի այն տան մէջ գտնվող պ. պ. Բերինովի և Բօռինովի մագազինի առջև։ Մագազինի պատուհանի վրա դրած էր մի ահագին մեծութեան բաց արած հովհար (վէյեր), որի կոթը կարծեմ փղոսկրից էր շինած, իսկ ծայրերը գեղեցիկ սպիտակ կարտօնից։ Իւրաքանչիւր ծայրում, որոնց թիւը գուցէ քսանի էր հասնում, շինած էին տեղեր ֆոտոգրաֆիական պատկերների համար, ինչպէս ալբոմում։

Ես երկար կանգնեցի պատուհանի առջև և ակամայ սկսեցի մտածել այդ հովհարի գործածութեան մասին։ Երևակայութեանս մի լայն ընթացք տալով, ուզեցի գուշակել ինչ տեսակ կնոջ ձեռքը կընկնի այդ գեղեցիկ և օտարօտի հովհարը։

Եթէ նրան կառնի մի դեռ անմեղ գիմնազիստուհի, կամ առհասարակ մի աշակերտուհի,— նա կը դնի բոլոր տեղերի մէջ իր մօր, հօր, եղբայրների, քոյրերի, ազգականների, վերջապէս և իր վարժապետների պատկերները։

Եթէ այդ հովհարը կառնի մի հարստացու աղջիկ,—ես խորհուրդ կը տամ նրան դնել նրա մէջ իր և իր փեսացուի պատկերները զանազան դիրքերով և զգեստներով քաշած՝ նստած, կանգնած, գլխին գդակը ծածկած, առանց գդակի, ձմեռվայ շորերով, ամառվայ բարակ շորով, և այլն։

Եթէ կառնի այդ հովհարը մի երաժշտուհի աղջիկ,—ես նրան խորհուրդ կը տամ զարդարել նրան ամբողջ աշխարհի ամենաերևելի երաժշտների ֆոտոգրաֆիաներով։

Եթէ կառնի մի կին, որ իր կեանքում շատ սիրեկաններ է ունեցել և դեռ յոյս ունի սիրեկաններ ունենալ,—ես խորհուրդ կը տամ նրան կազմել իր ամբողջ սիրահարական պատմութեան մի թանգարան, հերթով դասաւորելով իր բոլոր սիրեկանների լուսանկարները։

Վերջապէս եթէ այդ հովհարը ընտանիքի մօր սեփականութիւն կը դառնայ,—նա կարող է սկսելից իր մարդու և իր պատկերը դնել և յետոյ հերթով դասաւորել իր բոլոր երեխաների պատկերները հովհարի մէջ։ Ի հարկէ դժուար է տան և ութ երեխայ ունենալ,—բայց ինչի յոյս չունենալ. տոկունութեամբ, համբերութեամբ և աշխատանքով ամեն բանին կարելի է հասնել....

* * *

Երէկ կրկին անցայ մագազինի պատուհանի առջև,—էլ հովհար չը կար....Միթէ արդէն առան։

Հետաքրքիր կը լինէի իմանալ ինչ գեղեցիկ ձեռքեր է ընկել գեղեցիկ հովհարը։ Հետաքրքիր կը լինէի տեսնել ինչ ձեռվ և ինչ տեսակ պատկերներով է զարդարված նա....

* * *

Ֆէլիետօնը դեռ չը վերջացած մի բարեկամին կարդացի։

—Անդրիեվսկու գործի վրա այսքան խօսում ես, ասեց ինձ բարեկամը, իսկ մոռացել ես մեր բժշկների մասին խօսելու։

Եւ ճշմարիտ Անդրիեվսկու գործի քննութեան ժամանակ քիչ բան չը յայտնվեցաւ մեր բժիշկների վերաբերութեամբ։ Ս. Պետերբուրգից եկած էկսպերտ Սօրոկին ապացուցեց որ մեր բժշկները գուցէ շատ բան գիտեն, բայց բժշկութենից ոչինչ չեն հասկանում։ «Եթէ նրանք իմ ուսանողներ լինէին, ասեց նա, ես նրանց շատ վատ թւանշաններ կը դնէի։»

ցութիւնները։ Յետոյ նա վճռեց որ մինիստրը իր ձեռքի տակ ունեցած գումարից մի մասը նոր շինութիւնների վրա գործադրի։»

«Francais» լրագիրը հաստատում է այն լուրը թէ երեք սենատորական միտական կանդիդատների մասին միայն դրանց ընտրութենից յետոյ կը հրատարակեն։

«Rappel» լրագիրը կարծում է որ գեղարուեստից մինիստրը Օդէոն թատրոնի տեսչին, պ. Դիւքէնելին իրաւունք է տուել, որ նա դարձեալ երեք տարի շարունակի կառավարել յիշեալ թատրոնը։

«Pays» և «Ordre» լրագիրները ասում են որ մի քանի պատգամաւորներ ժամանակաւորապէս մի ընկերութիւն են կազմել, որ Գալ դը Կասսանեակի կանդիդատ ընտրելը օգտի համար ստորագրութիւններ հաւաքեն։ Մի և նոյն լրագիրները աւելացնում են, որ ստորագրողների անունները առանց հրատարակելու կը մնան մինչև որ դրանց առանձին իրաւունք չը տացվի հրատարակութեան։

«Եթէ հաւատանք «Figaro» լրագրի խօսքերին, ասում է «Temps» մի հարուստ կալուածատէր խոստացել է որ Գալ դը Կասսանեակի ընտրութեան բոլոր ծախսերը ինքը կը նուիրէ, եթէ մինչև անգամ այդ ծախսերը հասնէին 60,000 ֆրանկի։»

ԱՆԳԼԻԱ

«Indèpendance Belge» լրագրում կարդում ենք հետևեալը։

«Շիր-Ալիի վերջին նամակը գրված է նոյեմբերի 19-ին այսինքն այն օրվայ նախընթաց երեկոյեան, երբ, պաշտօնական տեղեկութիւններին նայելով, հնդկական խմբերը պէտք է գրաւէին Աֆգանիստանը, եթէ փոխարքան որ և է զոհացուցիչ պատասխան չը ստանար։ Պաշտօնական շրջաններում ենթադրում են, որ էմիրը այդ նամակը գրել է միայն Ալի-Մուսջիդի անկումից յետոյ, չը նայելով որ Լօնդոնի մի քանի լրագիրներ հեռագիրներ են ստացել Լրանց Թղթակիցներից, որոնք ասում են թէ էմիրի պատասխանը բերող սուրհանդակը մեզ շուարած երբ տեսաւ որ անգլիացոց զօրքերը արդէն մոտել են Ալի-Մուսջիդ. պատմում են որ դա այդ բանը տեսնելուց յետոյ իսկոյն վերադարձաւ էմիրի մօտ, որը այդ լսելուց յետոյ իսկոյն ուղարկեց իր գործակատարին անգլիացիների բանակը։»

«Times» լրագիրը կարծում է որ էմիրի նամակը, չը նայելով որ ըստ երևոյթին շատ զիջումներ է խոստանում, բայց և այնպէս, եթէ խորը քննենք, նա, ընդհակառակը, մերժում է Անգլիայի բոլոր պահանջները։ Փոխարքան պահանջել է Աֆգանիստանի իշխանից, որ նա զրաւոր ներողութիւն խնդրէ, և իր մօտ մի բրիտանական միսիան դեսպանութիւն ընդունէ։ Բայց Շիր-Ալին ներողութիւն չէ խնդրում, և աշխատում է միայն ժամանակաւոր դեսպանութիւն ընդունել։ Եթէ էմիրը չէ խոստանում մշտական դեսպանութիւն ընդունել, աւելացնում է «Times»-ը, ուրեմն բացարձակապէս մերժում է ամեն բան։

«Morning Post» մի և նոյն պակասութիւններն է գտնում էմիրի պատասխանի մէջ ինչ որ «Times»-ը և աւելացնում է որ այդ պատասխանը այնպիսի ձև չունէ, որով կարելի լինէր երկու ազգերի մէջ դադարեցնել թշնամական յարաբերութիւնները։

«Standard» լրագիրը համոզված է թէ Շիր-Ալիի նամակը Ալի-Մուսջիդի առումից յետոյ է, և այն կարծիքն է յայտնում, որ այդ կիսատ զիջողութիւնները, որ էմիրը խոստանում է անելու, այնու ամենայնիւ նշան է որ Շիր-Ալին վերջապէս հարկաւորութիւն կը զգայ զոհացուցիչ զիջումներ անելու, և որ չը պէտք է յուսահատվել հաշտութեան համար։

«Daily Telegraph» լրագիրը տեղեկացել է իր Լահօրի Թղթակցից, որ երկու ռուս օֆիցերներ, մէկ բժիշկ և երեսուն կօզակներ միշտ Կաբուլումն են գտնվում, և դա դրանից հետևացնում է որ Շիր-Ալիի նամակը այս ռուս գործակալների ազդեցութենից ազատ չէ։ Այս պատասխանը, ասում է նա, վճռական չէ, և դրա իւրաքանչիւր տողերից երևում է այն խորհուրդը, որ տալիս են էմիրին իր ռուս հիւրերը. առ այժմ դրանք աշխատում են, որ մի ժամանակաւորապէս հաշտութենով ժամանակ վաստակեն։

Այդ լրագիրը ասում է որ այժմ երբ արդէն Անգլիան միանգամ սկսեց պատերազմը, նա էլ յետ չի կենայ մինչև որ չը հասնի իր նպատակին և նա կարող է իր նպատակին հասնել կամ իր զէնքերի յաջողութեամբ, և կամ կատարել տալով Շիր-Ալիին այն պահանջները, որ Հնդկաստանի փոխարքան կամենում է հնդկական կայսրութեան անդորրութեան համար։

«Daily News» լրագիրը հրատարակել է իր Լահօրի թղթակցի մի հեռագիրը, որը հաստատում է թէ էմիրի նամակի բովանդակութիւնը արդէն Կարկուտայից դեկտեմբերի 4-ին ուղարկված է անգլիական կառավարութեանը։

Այս լրագիրը սրանից հետևացնում է, որ այդ նամակը արդէն գտնվում էր մինիստրների ձեռքում դեռ պարլամենտի բացվելուց առաջ, հետևաբար և այդ մասին ուրեմն մի և նոյն օրվայ ժողովում Աֆգանիստանի հարցի մասին խօսած կը լինեն։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 15 դեկտեմբերի։ Պետական բանկի 5% տոմակը արժէ առաջին շրջանի 96 ր. 25 կ., երկրորդ 95 ր. 12 կ., երրորդ 94 ր. 75 կ., չորրորդ 94 ր. 75 կ., ներքին 5% առաջին փոխառութեան տոմակը արժէ 237 ր. 75 կ., երկրորդ 233 ր., արևելեան առաջին փոխառութեան տոմակը 92 ր. 87 կ., երկրորդ 91 ր., 50 կ., ոսկի 8 ր. 59 կ.։ Ռուսաց 1 ռուբլ Լօնդոնի վրա արժէ 22,97 պենս, ռուսաց 100 ռուբլ Գերմանիայի վրա 196,12 մարկ, Փարիզի վրա 241 ֆր. 50 սանտ.։ Տրամադրութիւնը հանգիստ է։

ԼՕՆԴՕՆ, 15/27 դեկտեմբերի։ »Times» լրագիրը հաղորդում է, որ Եակուբ-խանը հասել է Ջելալաբադ։ Այդ քայլը հնազանդութիւն է համարվում։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 16 դեկտեմբերի։ «Новое Время» լրագրին Կ. Պօլսից հեռագրում են, որ պ. Լայարդ բանակցում է Բ. Դրան հետ Կիպրոս կղզին Անգլիային վերջնականապէս զիջելու մասին։ Լայարդ դրա փոխարէն 150,000 ֆունտ ստերլինգ դրամական վարձատրութիւն է առաջարկում։ Բ. Դուռը 550,000 ֆունտ ստերլինգ է պահանջում։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 16 դեկտեմբերի։ «Голосъ» լրագիրը հաղորդում է, որ դեկտեմբերի 15-ին Պենզայի նահանգի Նիժնի-Լոմով քաղաքը բերել են բուրդի առուտուր անող Զեմվերիկով վաճառականին, որ մեղադրված է սուտ պարտամուրհակներ շինելում։ Զեմվերիկով բանտումն է։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 16 դեկտեմբերի։ Այստեղ ձմերային եղանակ է։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 16 դեկտեմբերի։ «Правит. Вѣст.» լրագիրը հաղորդում է, որ Եարօսլավլի նահանգապետ Շմիդտ Նորին Մեծութեան սեփական դիւանատան երրորդ բաժնի կառավարիչ է նշանակված։

ԲԵՐԼԻՆ, 15/27 դեկտեմբերի։ Այստեղ հասաւ քառասուն մարդուց բաղկացած չինական դեսպանութիւնը, որ ուղևորվում է Ս. Պետերբուրգ։

ԼՕՆԴՕՆ, 16/28 դեկտեմբերի։ Կոմս Անդրաշի բոլորովին ընդդէմ է Անգլիայի մտքին Արևելեան Ռումելիան գրաւել թիւրքաց զօրքերով փոխանակ ռուսաց զօրքերի։

ԲԵՐԼԻՆ, 16/28 դեկտեմբերի։ Իշխան Բիսմարկին այստեղ սպասում են փետրվարի կէսին։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 17 դեկտեմբերի։ «Правит. Вѣстн.» լրագիրը հաղորդում է, որ Լիվադիա նաւը գրեթէ քանդված է։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 17 դեկտեմբերի։ «Голосъ» լրագրին Կ. Պօլսից հեռագրում են. «Թիւրքաց պետական մարդիկ ասում են, որ եթէ Ռուսաստանը թոյլ է տուել Անգլիային ազատ գործել Աֆգանիստանում, Անգլիան ևս ազատութիւն կը տայ Ռուսաստանին արևելեան հարցը վերջնականապէս վճռելու համար։ Լայարդ դրդում է Բ. Դրանը շտապել Ռուսաստանի հետ գործը վերջացնելու համար։

ՋԱԳՐԷԲ, 17/29 դեկտեմբերի։ Բ. Դուռը մտադիր է առաջարկել Ցունաստանին սահմանագիծ անցկացնել Պրիզրենդից մինչև Վալը, որ գտնվում է Կօրֆու կղզու դիմացը։

Եւ մեզ վիճակված է միշտ կախված լինել այդ տեսակ գիտնականներից, մեզ վիճակված է նրանցից բժշկվել։

Ճշմարիտ լաւ է ոչինչ ուսում չը ստանալ քան թէ մեր բժշկների պէս ուսում ունենալ և գիտութեան անունը կոտրել....

Թող ինձ ասիացի անուանեն, բայց ես այն համոզմունքն ունեմ որ ծայրայեղութիւնները միմեանց մօտենում են՝ կամ պէտք է դիմել մեր ժողովրդական բժշկներին և էմպիրիական կերպով բժշկել սովորած մեր պառաւ կանանց, կամ ճշմարիտ գիտութիւն ունեցող բժշկներին.... իսկ այդ վերջիններին մեզանում չէք գտնի։

Մեզանում բժիշկ լինելու, համալսարանում ուսում ստանալու և հիւանդներին բժշկելու համար ոչինչ գիտութիւն հարկաւոր չէ.... Հարկաւոր է միայն յանդգնութիւն, աւելի ոչինչ։

Ես ինքս չատ անգամ մի քանի ժամվայ մէջ բժշկվել եմ մեր հայ պառաւ կանանց ձեռքով այնպիսի հիւանդութիւններից, որոնց մեր համալսարանական դոկտորները ոչ թէ միայն չը կարողացան տարիներով բժշկել, բայց որոնց գոյութիւնն էլ նրանք իմ մէջ հերքում էին։

Ահա մեր համալսարանական գիտութիւնը։

Երևելի ֆրանսիացի բեմական հեղինակ Մոլիէր, որ այդքան ծաղրում էր իր ժամանակակից բժշկներին իր գրուածների մէջ, եթէ այժմ դերեզմանից վեր կենար ու դար մեր երկիրը, կը զարմանար որ մեր հասարակութեան մէջ կը պատահէր մեծ մասամբ իրան լաւ ծանօթ և իր պիէսներում ներկայացած չարլատան բժշկներին.... Նա իր բոլոր հին ծանօթներին նորից կը պատահէր....

***

Տեսնում էք ընթեցող ինչքան գրելու չատ նիւթ է տալիս խեղճ օրիորդ Անդրիեվսկու պրոցէսը։

Բայց բաւական է։ Անցնենք մի խնդրին, որ այժմ հետաքրքրում է մեր ամբողջ քաղաքը, դա քաղաքային Դումայի համար ձայնաւորների ընտրութեան խնդիրն է։

Մեր հասարակութիւնը իր կատարված ընտրութիւններով նորից ապացուցեց, որ բոլորովին պատրաստ չէ հասարակական գործունէութեանը, հասած չէ հասարակական զարգացմանը, ընդունակ չէ իրան տուած ինքնավարութեան իրաւունքը գործածելու։

Իւրաքանչիւր բաժնի ընտրողների կէսը հաւիւ հաւաքվում է ընտրութիւններին. դորանով մեր ընտրողները ցոյց են տալիս իրանց կատարեալ անտարբերութիւնը դէպի հասարակաց շահերը։

Բացի սրանից մեծ մասամբ մեր ընտրողները քուէարկում են անձնական հաշիւներից և ազգական կապերից կամ բարեկամական և այլ աւելի նիւթական յարաբերութիւններից դրդված։

Ես ինքս ցենզ չունեմ և ներկայ գտնվեցայ ընտրութիւններին որպէս մասնաւոր անձն, որպէս «Մշակի» թղթակիցը։

Եւ ինչ եմ տեսնում ու լսում. նրանց, որոնք արդէն չորս տարի Դումային ծառայել են, որոնք իւրաքանչիւր նիստում ներկայ են գտնվել, ուռանդով մասնակցել են վիճաբանութիւններին, աշխատել են զանազան յանձնաժողովներում, ցոյց են տուել թէ կարող են օգտաւէտ լինել քաղաքին,—այդպիսիներին սնացնում են։

Իսկ նրանց, որոնք գրեթէ չեն էլ յաճախել Դումայի նիստերը, կամ եթէ ներկայ էլ գտնվել են նիստերին, միշտ անձայն են մնացել, երբէք մի խօսք չեն ասել,—նրանց ձայների ահագին բազմութեամբ ընտրում են։

Մէկի հետ եթէ լաւ յարաբերութիւնների մէջ եմ, կախված եմ նրանից, նրան փող եմ պարտ, կամ պէտք է պսակվեմ նրա աղջկայ հետ, կամ նա հարուստ է և ես կարող եմ նրա մէջ ժամանակով հարկաւորութիւն ունենալ,—ես նրան սպիտակ քուէ եմ դցում։

Միւսին ես անձնապէս չեմ սիրում, կամ չեմ սիրում նրա հօրը, վատ եմ նրա եղբօր հետ,—ես նրան սև քուէ եմ տալիս։

Հասարակական հաշիւները հասարակական գործերի մէջ մեզանում աւելի մեծ դեր են խաղում, քան թէ հասարակական շահերը....

***

Վրաց «Դրօէբա» լրագիրը իր 256 համարում դիմում է մեզ հետևեալ հարցերով։

«Ի՞նչ կասէիք եթէ Ս. Պետերբուրգի Դումայի մէջ ընտրվէին միայն գերմանացիներ և ոչ մի ռուս»

«Ինչ կասէիք եթէ Վարշավայում ընտրվէին միայն հրէաներ և ոչ մի լեհացի։»

«Ինչ կասէք որ Թիֆլիսի Դումայի մէջ ձայնաւոր ընտրվում են միայն հայեր և ոչ մի վրացի։»

Այդ հարցերով վրաց լրագիրը դիմում է գլխաւորապէս մեզ, հայոց լրագրութեանը։

Իմ պատասխանը շատ հասարակ է։ Մենք էլ չենք համակրում մեր հայոց հասարակութեան ժամանակակից ագէտ, նիւթապաշտ և հարստահարող սերունդին։ Մենք էլ կուզենայինք որ հայերը աւելի զարգացած, լուսաւորված և անկողմնապահ լինէին, որ նրանք աւելի ընդունակ լինէին հասարակաց շահերը ըմբռնելու, մենք էլ չենք սիրում մեր ժամանակակից ազգ սերունդը.... բայց, պ. պ. վրացիներ, դուք այնու ամենայնիւ չէք կարող պահանջել որ հայերը կազմելով Թիֆլիս քաղաքի ազգաբնակութեան մեծ մասը, ընտրէին վրացիներին միայն այն պատճառով որ մի ժամանակ Թիֆլիսը պատմական Վրաստան է եղել։ Պատմական իրողութիւններ շատ քիչ կշիռք ունեն տնտեսական շահերի մէջ։ Իդէալական յարաբերութիւնները չէ կարելի պահանջել այնտեղ, որտեղ մարդը զգում է թէ նա է որ ունի նիւթական շահերը, նա է որ աշխատում է, արդիւնաբերում է, քաղաքին հարկեր է վճարում, իր վրա է կրում քաղաքի բիւդժէտի ամբողջ ծանրութիւնը։

Հայը ցենզ ունի Թիֆլիսում, վրացին ցենզ չունի Թիֆլիսում։ Քաղաքային հարկերի մեծ և ատ մեծ մասը հայն է վճարում. Թիֆլիսը, թէև Վրաստանի հողի վրա է, հայոց քաղաք է։ Այդ պատճառով հայը հային է ընտրում։ Բայց որովհետև նա դեռ ագէտ է, կրթված չէ,—նա ընտրութեան ժամանակ թելադրվում է ոչ թէ լոյն հասարակական շահերով, այլ դեռ ևս նեղ անձնական օգուտներով։ Բայց եթէ նա զարգացած, անկողմնապահ, ազնիւ էլ լիներ,—ինչի՞ նա պէտք է ընտրէր նրանց, որոնք գրեթէ ոչինչ ցենզ չունեն քաղաքում, գրեթէ ոչինչ հարկ չեն վճարում քաղաքային գանձարանը, որովհետև գրեթէ ոչինչ չունեն քաղաքում, ուրեմն նրանց շահերը քաղաքային կեանքից դուրսն են.... Ի՞նչ արած, դա դուցէ դժբաղդութիւն է. բայց տնտեսական մի երևոյթ է, տնտեսական օրէնք է։

Նոյնը նկատում ենք և Գալիցիայում։ Այնտեղ, ինչպէս յայտնի է, պատմական Լեհաստանի մի մասէ, իրանք լեհացիները գլուղական կալուածներ ունեն, որոնք միշտ պարքերի մէջ են խրված և հողերը հետզհետէ անցում են գերմանացիների և հրէաների ձեռքը, իսկ քաղաքներում լեհացիները գրեթէ ոչինչ չունեն՝ տները, հողերը, այգիները, գործարանները, հիւրանոցները, զանազան գործանոցները, խանութները, մի խօսքով ամեն տեսակ հիմնարկութիւններ, որոնք քաղաքին հարկ են վճարում, որոնցով քաղաքը ապրում է,—գերմանացիների և հրէաների ձեռքումն են։

Տնտեսական երևոյթները բողոքներով փոխել չէ կարելի, բայց հասարակութեան բարոյականութիւնը կարելի է բարձրացնել և ազնուացնել լուսաւորութեամբ։

Ասիացի

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՔԱՐԱԾՈՒԽ „ԹՈՒՍԱՍՏԱՆ“ ՇԱՀՏԻ

(ՀԱՆՔԻՑ), ՈՐ ԳՏՆՎՈՒՄ Է ՋԷԼՕՐԱՆԻ ԱՐՈՒԱՐՁԱՆԻ ԿՈՒՐՍԷՔԱ ԳԻՒՂՈՒՄ

ԸՆԿ. ՆԷՅՄԱՆ—ՇԷՆԻՆԳ

Ծախվում է ՇԷՆԻՆԳԻ ՊԱՎԻԼԻՕՆՈՒՄ ՄԵԾ ՔԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ ՄԻԱՅՆ ԱՄՈՂՋ ՎԱԳՕՆՆԵՐՈՎ ԵՐԿԱԹՈՒՂՈՒ ԿԱՅԱՐԱՆԻՑ ՊՈՒԴԸ 25 ԿՕՊ., ԻՍԿ ՓՈՔՐ ՔԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ ԿԱՐԵԼԻ Է ԳՆԵԼ ՔԱՂԱՔԻ ՄԷՋ ԳՏՆՎՈՂ ՊԱՀԵՍՏԻՑ ՊՈՒԴԸ 28 ԿՕՊԷԿՈՎ։

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ յայտնում է ի գիտութիւն ամենքի Թիֆլիսի քաղաքային Դումայի 1879-1882 թիւը ձայնաւորներ ընտրելու համար կանոններ, որ հաստատված են Դումայից 1872 թւի հոկտեմբերի 16-ին

§ 1. Ընտրութիւնների ժամանակամիջոցից մէկ շաբաթ առաջ իւրաքանչիւր կարգի ընտրողներին առանձնապէս իմաց են տրվում ընտրութիւնների տեղը, օրը և թիւը յայտարարութիւնների միջոցով, որոնք կը տպվին բոլոր տեղական լրագիրներում, և նոյնպէս քաղաքի զանազան մասերում ռուսաց հայոց և վրաց լեզուներով յայտարարութիւններ կպցնելով և ուղարկելով այդ յայտարարութիւնները Սոսլօվնի վարչութիւնները։

§ 2. Նախքան եկող ընտրողները ժողովի դահլիճի մուտքի առաջ նշանակվում են ցուցակի մէջ գալու կարգով իւրաքանչիւրի ազգանունի առաջ նշանակելով ձայների թիւը և յետոյ ստանում են թէ դահլիճի մուտքի տոմսակը և թէ մէկ տպագրված բլանկ կանդիդատներ նշանակելու համար, եթէ նրանք կանխաւ պատրաստած չունեն կանդիդատների ցուցակը։ Իւրաքանչիւր մուտքի տոմսակի վրա նշանակվում են ներկայացնողի ձայների թիւը։

§ 3. Ընտրողները մտնելով նիստի դահլիճը ժողովի նախագահին ներկայացնում են ձայնաւորներ առաջարկված կանդիդատների ցուցակը, որը նախագահը գցում է ներկայ եղող ընտրողների ներկայութեամբ ուռնայի մէջ. և ապա նախագահի ժողովը բացելուց կէս ժամ յետոյ, սկսվում է ցուցակների որոշումը և ընդհանուր կանդիդատական ցուցակ կազմելը։ Ուռնայի մէջ ձգած ցուցակների որոշելը սկսելուց յետոյ, նոր ցուցակներ են ընդունվում։

§ 4. Ձայնաւորներ առաջարկված անձինք, որոնք չեն նշանակված ընտրողական ցուցակների մէջ հանվում են կանդիդատների թւից։

§ 5. Ժողովի դահլիճում բացի իւրաքանչիւր կարգին պատկանող ընտրողներից և մասուլի ներկայացուցիչներից, ոչ ոք չէ թոյլատրվում, բայց հասարակութիւնը կարող է թոյլ տրված լինել ընտրողներից առանձին, եթէ որ դահլիճի բովանդակութիւնը կը թոյլ տայ։

§ 6. Քուէարկութեան համար քուէները բաժանվում են ձայների թւով ժողովի նախագահից և Ընտրողական ժողովի լիազօր անձերից։

§ 7. Ընտրողները հրաւիրվում են քուէարկութեան համար գալու կարգով. Այն ընտրողները որոնք գալիս են քուէարկութիւնը սկըսելուց յետոյ նոյնպէս մասնակցում են ընտրութիւնների մէջ։ Այն ընտրողը որը քուէարկվում է ձայնաւոր ընտրվելու համար, իրաւունք չունի քուէ ձգել իր քուէարկվող արկղի մէջ։

§ 8. Քուէարկութիւնը վերջանալուց յետոյ սկսվում են ձայներ հաշվելը, նրանից յետոյ ընտրողները իրաւունք չունեն մասնակցել քուէարկութեանը։

§ 9. Իւրաքանչիւր արկղի մէջ գտնված քուէների հաշիւը վերջացնելուց յետոյ, ընտրողական թերթի վրա նշանակվում են իւրաքանչիւր կանդիդատի ազգանունի հանդէպ ընտրող և չընտրող քուէների վերջին թիւը։ Արկղի քուէների հաշիւը վերջացնելուց յետոյ թերթը կարդացվում է ընտրողական ժողովին և ստորագրում են նախագահը և ներկայ եղող ընտրողները։

ԳԵՐՄԱՆԵՐԷՆ ԼԵԶՈՒԻ և ԵՐԱԺՇՏՈՒԹԵԱՆ ՈՒՍՈՒՑԻՉԸ փնտռում է դասերի համար կամ վարձով բնակարան և ուտելիք։ Հարցնել կլասիկական Գիմնազիայի գործավարին։

5—5

ԳՐԻԳՈՐ ՆԱՍԻՐԵԱՆԻ ՊԱՏՐԱՍՏԻ ՀԱԳՈՒՍՏՆԵՐԻ ԽԱՆՈՒԹՈՒՄ ԵՐԵՒԱՆԵԱՆ ՀՐԱՊԱՐԱԿԻ ՎՐԱ

ստացվել են մեծ քանակութեամբ ՑՐԱԿԻ ԵՒ ՏՐԻԿՕԻ ՍԻՒՐՏԻԿՆԵՐԻ ՇՈՐԵՐ, որսորդական ԱՌԱՒՕՏԵԱՆ ԺՕԿԵՏՆԵՐ, ձմեռային ՊԱԼՏՕՆԵՐ և ՎԱՐՏԻԿՆԵՐ, երեխայոց հագուստներ, ՎԵՐԱՐԿՈՒ—ԽԱԼԱՏՆԵՐ զարդերով, նոյնպէս ընդունվում են ՊԱՏՈՒԷՐՆԵՐ զինուորական և քաղաքական հագուստների համար։ Յոյս ունիմ, որ ինչպէս պատուիրողները նոյնպէս է գնողները ԲԱՒԱԿԱՆ ԿԸ ՄՆԱՆ։

18—75

Լոյս տեսաւ և վաճառվում է «Կենտրոնական» և պ. Զ. Գրիգորեանցի գրավաճառանոցներում. «ՈՐՆԷ» գործ Ֆրանց Հօֆմանի, թարգ. Վիշապազուն գինն, է 40 կ.։

6—6

«ՄՇԱԿԻ» ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ հարկաւոր է մէկ ԼՐԱԳԻՐ ՏԱՐԱԾՈՂ։ Պայմանների մասին կարելի է տեղեկանալ ԱՄԵՆ ՕՐ առաւօտեան ժամի 10-ից մինչև 2 ժամը կէսօրից յետոյ։
ВЪ РЕДАКЦІИ «МШАКЪ» НУЖЕНЪ РАЗНОЩИКЪ.

ՂԱՐՍԻ ծխական ուսումնարանի համար հարկաւոր են երկու ուսուցիչներ։ Պայմանների մասին խօսել ցանկացողները կարող են հասցէն իմանալ «Մշակի» խմբագրատանը։

4—4

ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ՀԱՆԴԷՍ

որ գտնվում էր Գօլօվինսկի պրօսպէկտի վրա Սարաջովի տանը, այժմ գտնվում է նոյն ԳՕԼՕՎԻՆՍԿԻ պրօսպէկտի վրա, ՇԻՕԵՎԻ տանը, Գերմանական կլուբի և Վէստլէր Ֆոտոգրաֆիայի մօտ մի և նոյն սանդուղքով։ Այցելողների համար բաց է ԱՄԵՆ ՕՐ առաւօտեան 9 ժամից մինչև երեկոյեան 5 ժամը։ Հաւաքածուին ՆՈՐ ՆԿԱՐՆԵՐ են աւելացրած։

13—25

ԿԵՆՏՐՕՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՈՒՄ

Վաճառվում են, ի միջի այլոց, հետեւեալ գրքերը՝

	ր.	կ.			ր.	կ.
1. Տիւլէնջեան Տոմարագիտութիւն կազմ. 78 թ.	2	25	ճանապ.	ծախս.	2	60
2. Տերենց Թորոս Լեւոնի, պատ. վէպ	1	„	—	—	1	20
3. Խուդաբաշեան բառգիրք հայերէնից ռուսերէն երկու հատոր, կազմած (սակաւաթիւ). . .	7	„	—	—	7	60
4. Ֆրանց Հօֆման Որնէ, վէպ.	—	40	—	—	„	50
5. Косовичъ Мет. Олендорфа для изученія французскаго языка 78 г.	3	„	—	—	3	40
6. Ахвердовъ Арменія въ V вѣкѣ	1	„	—	—	1	20
7. Т. Акоповъ современное Арм. общ. въ Оттоманской имперіи.	„	40	—	—	„	50

8. Ստացված են բազմաթիւ հայերէն գրքեր, թէ ինքնուրոյն և թէ թարգմանական, Կ. Պօլսոյ և Զմիւռնիոյ տպագրութիւնք։

9. Շուտով կը սկսվի վաճառվել Եղիշէի Վարդանանց պատերազմի պատմութեան նոր տպագրութիւնը, ըստ Անձեւացեաց օրինակի։ Տպագրութեանը բարեհաճեց հսկել Նորին Սրբազնութիւն Գաբրիէլ Արքեպիսկոպոս Այվազեանը. տպագրված է ամենայն զգուշութեամբ և ընտիր թղթի վրա։ Հասցէն՝

Въ Центральную книжную торговлю. Въ Тифлисѣ.

ОБЪ ИЗДАНІИ ВЪ 1879 ГОДУ

ЛИТЕРАТУРНО-ПОЛИТИЧЕСКОЙ ГАЗЕТЫ

„ТИФЛИССКІЙ ВѢСТНИКЪ“

ГОДЪ СЕДЬМОЙ

Въ 1879 году ***Тифлисскій Вѣстникъ*** будетъ издаваться ежедневно, за исключеніемъ дней послѣпраздничныхъ, по прежней программѣ.

Подписка на 1879 годъ открыта и принимается въ конторѣ редакціи на Эриванской площади, № 3.

ПОДПИСНАЯ ЦѢНА:

	НА ГОДЪ.	НА ПОЛГОДА:
Въ Тифлисѣ, безъ доставки. . .	10 р.	5 р. 50 к.
› съ доставкой. . .	11 ›	6 ›
Съ пересылкой по Имперіи . .	12	6 › 50 ›
За границу по почтовому союзу.	15	8 ›

Иногородные адресуютъ свои требованія въ Тифлисъ въ редакцію ***Тифлисскаго Вѣстника.***

ОБЪ ИЗДАНІИ ВЪ 1879 ГОДУ ВЪ БАКУ ГАЗЕТЫ

БАКИНСКІЯ ИЗВѢСТІЯ

ГОДЪ ЧЕТВЕРТЫЙ

Цѣна газеты на годъ въ Баку съ доставкой 5 р., на полгода—3 р., на три мѣсяца 1 р. 75 к., въ мѣсяцъ 75 к. Съ пересылкой во всѣ города имперіи на годъ 6 р. на полгода 3 р. 50 к., на три мѣсяца 2 р. на мѣсяцъ 90 к.

Подписка принимается въ Баку въ домѣ Дадашева, на Милютинской улицѣ близъ гостинницы „Кавказъ“ и въ Бакинскомъ Обществѣ Взаимнаго Кредита.

Иногородные адресуютъ свои требованія исключительно: *Въ Баку, въ редакцію Бакинскихъ Извѣстій,*

„ТИФЛИССКІЯ ОБЪЯВЛЕНІЯ“

Въ 1879-мъ году будутъ издаваться по возможности въ улучшенномъ видѣ. Будетъ обращено особенное вниманіе на типографскую исправность и своевременную доставку. Форматъ по мѣрѣ накопленія матеріаловъ будетъ увеличиваться.

ПОДПИСНАЯ ЦѢНА.

	на годъ	на 1/2 года	на 3 мѣс.	на мѣс.
Въ Тифл. съ дост.	2	1р.—50к.	1р.	50 коп.
Иногороднымъ	4	2р. 50 к.	1р.—50к.	75 коп.

Подписка исключительно принимается въ конторѣ редакцій что въ Галереѣ Арцруни, на Дворцовой улицѣ.

Дозволено Цензурою 18 Декабря 1878 г. Тифлисъ Типографія Мартиросіанца Խմբագիր—Հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ